Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2458

# ԿԱՐԱ

## ԻՌԼԱՆԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ԹԱՐԳՄ. ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆ

82
4-29

ԹԻՖԼԻՍ
1905

«ԼՈՒՄԱՅ» ի խմբագրատանը վաճառւում են

## ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

*աշխատութիւնները.*

1 Աղօթատետր ե. տպ. 1903 . . . — 10
2 Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպառուած) — 10
3 « « բ. տ. գ. տպ. 1891 . — 25
4 « « գ տ. գ. տպ. . . — 25
5 Տօմար և տօնացոյց Հայաստ. եկ. բ. տպ. 1894 — 50
6 Կարնոյ գաղթը պատմական տեսութիւն, 1891 — 15
7 Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ա—Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893 . . . . . , 2 —
8 Նոյն գիրք Գ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը, կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսրոպեան մրցանակին արժանացած 1894 . . . . 7 —
9 Նոյն գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800 1899 4 —
10 Նոյն գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. 1902 4 —
11 Նոյն գիրք Զ. Դաւիթ կաթ. մ. 1. 1801—2 1904 4 —
12 Նոյն գիրք Է. Դաւիթ կաթ. մ. Բ. 1905 . 4 —
13 Կարգ աստուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 36 նկարով, Ե. տպ. 1904 . — 50
14 Հընից-Նորից, հնախօս. ուղևոր. պրակ Ա. 1900 — 30
15 Պատի օրացոյց 1902 ամի, ժամանակ. ԾԴ տարի — 50
16 Նամակագիրք, 1902 . . . . . — 50
17 Ծոցի օրացոյց 1902 ամի և յաւելուած.—Առողջապահական խոհարարութիւն. . . — 15
18 Զաքար Ղարղաձեանցի կտակը և Մշակի զառանցանքները (սպ.). . . . . . . — 5

### Բ. Թարգմանութիւնները

19 Հաւատարմութիւնը ամեն արդիւնքի յաղթում է Ֆ. Հոֆմանի 1877 . . . . — 40
20 Խաւարից դէպի լոյս. Ֆ. Հոֆմ. 1888. (սպառ.) . — 40
21 Դոն Քիշոտ լամանշեցի, Մ. Սէրվ. 1878 (սպառ.) — 70
22 Գէորգ Ռօլլէստօն, 1879 (սպառուած) . . — 60
23 Երրորդ ոսկի, առակ Լակիդէի բ. տպ. 1893 . — 10
24 Ռոբինզօն (հրատ. Թիֆլ. տպագր. ընկ.) (սպ.) — 60
25 Չէստէրտօնի ժառանգը, պատկերազարդ, 1882. 1 —
26 Ակտէա. տ. Սիսօեվսկի. 1885 (սպառուած) . — 50
27 Եան Էրնստ Սմօլեար. Ն. Եանչուկի, 1885 (սպ.) — 20
28 Արծուի մտածմունքը, պրոֆ. Մ. Բոգդան. 1892. — 5
29 Գիւղի սուրբը, Սվեատօպոլկ Չէխի, 1892 . . — 10
30 Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892 . . . 1 —


823
4-29
14 JUN 2004
2 NOV 2009


# Կ Ա Ր Ա

(ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)


Дозволено цензурою. Тифлисъ, 9 Іюля 1904 г.


ԹԱՐԳՄ. ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆ


1002
6965



ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
1904

21.05.2013
2453

Дозволено цензурою. Тифлисъ, 9 Іюля 1904 г.

# ԿԱՐԱ

Մի ժամանակ Կրարուպեան պանդոկում մի աղջիկ կար, որի անունն էր Կարա։

Նա էր միայն ծառայում այցելուներին և ճանապարհորդներին. տան տիկինը ժամանակ չունէր. Նա սաստիկ զբաղուած էր, ամբողջ օրը որոնելով իւր բանալիները, որ անդադար կորցնում էր։ Պանդոկը միշտ լի էր, աշնանային երեկոները. Հէնց որ մթնում էր, հաւաքւում էին այստեղ շրջակայքի բնակիչները սուրճ և պունչ վայելելու, իսկ անցորդները մտնում էին հանգստանալու և մի տաք բան խմելու համար։ Եւ Կարան կարողանում էր մէնակ հասնել ամենքին, թէպէտև գործ չինելիս ամենևին չէր շտապում, և այս կողմ այն կողմ չէր ընկնում։

Նա այնպէս նիհար և փոքրահասակ էր կարծես թէ երեխայ լինէր. Նորա անխօս և ծանր բնութիւնը չէր դուր գալիս անցուոր վաճառականներին ու գործակատարներին։ Սորա հակառակ հաստատուն բնաւորութեան տէր մարդիկ, որոնց համար ժամանակը թանգ արժէր

և որոնք պահանջում էին, որ շուտով մօտ բերեն իրանց սուրճը և տաք տաք, անչափ գովում էին Կարային և երբ սա մատուցարանը ձեռին անցնում էր հիւրերի միջով, ամենքը յետ էին քաշւում և ճանապարհ էին տալիս. իսկոյն խօսակցութեանց վերջ էր դրւում և ամենքը զուարճութեամբ նայում էին նորան։

Կարան մեծ մեծ աչքեր ունէր և գեղեցիկ կամարաձև յօնքեր։ Աչքերը կարծես թէ միշտ նայում էին հեռու, իսկ յօնքերը կարծես զարմանքից բարձրացած էին դէպ ի վեր։ Այս պատճառով անծանօթ հիւրերը կարծում էին, թէ նա չէ լսում և չէ հասկանում, ինչ որ իրան պատուիրում էին։ Բայց Կարան շատ լաւ լսում էր ամէն բան և երբէք իրեն տուած պատուէրները չէր շփոթում։

Ծովից փչեց սաստիկ հարաւային հողմ և հասնելով պանդոկին՝ ներս թափանցեց ուղղակի ախոռի մէջ, սկսաւ այս և այն կողմ շարժել առաստաղից կախուած լապտերը, թռցրեց ախոռապանի գլխից գլխարկը և տարաւ հեռու, շատ հեռու. ձիաների գլխներին շըպրտեց տապճակները, իսկ սպիտակ հաւը տարաւ գցեց դաշտի մէջ։ Աքաղաղը զարհուրելի աղաղակ բարձրացրեց, ախոռապանն էլ գոռում էր ու հայհոյում, հաւերը կրկռում էին,



ձիաները ոտները զարկում էին գետնին, սմբակներով կայծեր հանելով քարերից, և մինչև անգամ բադերն էլ, որոնք գարու յուսով հաւաքուել էին դաշտի մօտ, բոլոր ուժով գրգռում էին։ Հողմը շարունակ փչում էր զարհուրելի կատաղութեամբ, մինչև որ պանդոկից դուրս եկան երկու մարդ և մի կերպով դռները փակեցին։

Պանդոկը տակն ու վրայ անելուց յետոյ հողմը անցաւ անտառը, ձորի երկայնութեամբ փչելով և պանդոկից կէս մղոնաչափ հեռաւորութեան վրայ մի օրինաւոր հարուած տուեց փոստային կառքին։

— Տես թէ ինչպէս է շտապում Կրպրուպեան պանդոկը, փնթփնթաց կառապան Անդէրսը և իւր երկայն մտրակը շառաչեց փրփրած ձիաների մէջքին։ Նորա նկատողութիւնը վերաբերում էր կոնդուկտորին, որ ահա քաներորդ անգամ շտապեցնում էր նորան կառքի փոքրիկ լուսամուտը բանալով։ Սկզբում կոնդուկտորը բարեկամաբար հրաւիրեց կառապանին սուրճի, բայց յետոյ, հետզհետէ սկսաւ կըծու կերպարանք ցոյց տալ, լուսամուտը աւելի ու աւելի սաստիկ էր խփում և այնտեղից լսւում էր անհաճոյ խօսքեր կառավարին և ձիաներին վերաբերեալ։ Իսկ հողմը չէր հանդարտւում

և անտառը սաստիկ ձայն էր տալիս։ Լուսինը բոլորակ էր, բայց ծածկուած էր խիտ ամպերով, այնպէս որ բաւականին մութ գիշեր էր։

Կրպարուպեան պանդոկի ետևը մի մեծ ճահիճ կար սևահողի խաւով ծածկուած և խորը վտանգաւոր վիհերով։ Թփերի մէջ անտառում ձգւում էր մի կանաչ շերտ, որ մթան մէջ ճանապարհ էր կարծւում, բայց ամենևին ճանապարհ չէր. այդ շերտը հասնում էր մի գրի ծայրին, որ միւսներից աւելի մեծ էր և խոր։ Նորա մօտ բարձր խոտի մէջ ծածկուած էր մի աղուէս և որսի էր սպասում, իսկ անտառում այստեղից այնտեղ ոստոստում էր մի նապաստակ։ Աղուէսը պառկած մտածում էր, թէ այդպէս ուշ ժամանակ նապաստակը երկար չի վազվզի և հեռու տեղ չի գնալ։ Նա դունչը վեր քաշած գնում էր և ինքնագոհ կերպով մտածում, թէ աղուէսները հետզհետէ աւելի խելօքանում են, իսկ նապաստակները յիմարանում։

Պանդոկում այդ միջոցին շփոթ ու աղմուկ էր. երկու անցորդ վաճառականներ պատուիրեցին նապաստակ խորովել. տեղական փաստաբանն եկաւ և ուզում էր տեսնել պանդոկատիրոջ մի նշանաւոր գործի պատճառով. պանդոկատէրը տանը չէր. նա գնացել էր Տիատէտ, ուր մի աճրդախօսութիւն կար, իսկ նա-



դա ամուսինը բացի խոհանոցը աշխարհից տեղեկութիւն չունէր, և յանկարծ ստիպուած էր մի երկար, շատ երկար պատմութիւն լսել և նշանաւոր թուղթ ընդունել, նա շատ շփոթուեցաւ։

Վառարանի մօտ կանգնած էր մի անցորդ և սպասում էր որ բերեն իր պատուիրած սոդայի ջուրը. երկու ձիավաճառներ արդէն երեք անգամ պահանջել էին կոնեակով սուրճ, ծառան շատ վաղուց դատարկ լապտերը ձեռին կանգնած սպասում էր մոմին, իսկ մի բարձրահասակ յաղթանդամ գիւղացի աչքերը չէր հեռացնում Կարաից, սպասելով նորանից՝ տուած դրամի մնացորդը ստանալուն։ Կարան անց ու դարձ էր անում, առանց շտապելու և առանց ամենևին շփոթուելու և հասնում էր ամեն տեղ։ Նորա մեծ մեծ աչքերը, սովորականին պէս, բոլորովին հանդարտ նայուածք ունէին և յօնքերը չէին շարժւում, իւր փոքրիկ գլուխը նա բռնած ունէր ուղիղ և կարծես թէ մտածում էր, որ չը շփոթուի ու ամեն բան կարգին կատարէ։ Նորա կապտագոյն բրդեայ հագուստը նեղ էր իրան և օձիքը մի ծալ էր կազմում նոյն իսկ մազերի տակ։

«Ի՞նչ տեսակ սպիտակ մարմին ունին այստեղի աղջիկները», ձիավաճառներից մէկը ա-

սաց միւսին։ Նոքա երկուսն էլ երիտասարդ էին և այս առարկայի մասին խօսում էին որպէս գործին հմուտ մարդիկ։ Այցելուներից մէկը կանգնած էր լուսամուտի առաջ և ժամացոյցին նայելով՝ ասաց. «սուրհանդակը գալիս է,—և այսօր կարծես սովորականից աւելի կանուխ»։ Դուրսը հողմը շարունակ փչում էր. պանդոկի դռները դարձեալ փակ էին, իսկ հողմը փչում էր դռներից և ծուխ էր հանում վառարանից։

Կարան խոհանոց գնաց հէնց այն րոպէին, երբ ընդհանուր սենեակի դռները բացուեցան։ Ներս մտաւ կառքի կոնդուկտօրը և ողջունեց հիւրերին։ Նա մի գեղեցիկ բարձրահասակ տղամարդ էր, սև աչքերով, սև մեծածաւալ մօրուքով և գանգուր մազերով։ Նա ծածկուած ունէր մի երկայն ու լայն վերարկու կարմիր մահուդից և մաղէ մեծ օձիքով։

Սեղանի վրայ կախած իւղային երկու խղճուկ լամպարների լոյսը կարծես մի առանձին ախորժանօք ընկաւ վերարկուի պայծառ կարմիր գոյնի վերայ, որ այնպէս հաճութեամբ որոշւում էր սենեակի գորշ գոյնից, և գեղեցիկ վերարկուով ու գանգրահեր կոնդուկտօրի ամբողջ կերպարանքը, երբ նա ման էր գալիս ցած և սևացած սենեակում, ներկայանում էր որպէս մի հրաշալիք՝ գեղեցկութեան և չքեղութեան։



Կարան շուտով յետ դարձաւ խոհանոցից մատուցարանը ձեռքին և հիւրերի մէջ անցնելիս գլուխը քաշ արեց, այնպէս որ նորա երեսը չէր երևում։

Վաճառականներին նա մօտ տարաւ խորոված նապաստակ, իսկ երկու գործակատարներին, որոնք նստած էին դրացի սենեակում, մի շիշ սօդայի ջուր։ Լապտերը ձեռքին սպասող ծառային տուեց փողի մնացորդը, իսկ սենեակից դուրս գալով, վառարանի մօտ կանգնած այցելուին տուեց ճարպի մոմ։

Տիկինը բոլորովին յուսահատուած էր. բանալիները նա, իւր սպասածին հակառակ, գտաւ, բայց արի տես, որ կորցրեց փաստաբանի թուղթը, և այս պատճառով ընդհանուր սենեակում սաստիկ անկարգութիւն էր տիրում։ Հիւրերից ոչ մէկը ուզած բանը չէր ստանում և ամենքը գոռում գոչում էին միասին. գործակատարները շարունակ զանգահարում էին, ձկնավաճառները հրճւում էին իրանց առաջ դրուած խորոված նապաստակը վայելելուց առաջ, ծառան չկարողանալով բան հասկացնել տիկնոջ, համբերութիւնը կորցրեց և սկսեց ճարպէ մոմով զարկել նորա ուսին։ Կարան, տարաբաղդաբար, անյայտացել էր։

Կառավար Անդրէսը արդէն նստած էր իւր

տեղը, անտառապետը արդէն պատրաստ էր դըռները բանալու, ճանապարհորդները վաղուց արդէն նստած էին կառքի մէջ և համբերութիւնը կորցնում էին. Ձիաներն անգամ չէին կանգնում, չը նայելով որ անյաջող ճանապարհորդութիւն պիտի ունենային, որովհետև հողմը փչում էր առաջուայ նման, իսկ կօնդուկտօրը չկար ու չկար։ Ահա վերջապէս նա եկաւ, իւր փառաւոր վերարկուն ձեռքին, և ներողութիւն խնդրեց, որ սպասել տուեց։ Նստելով իւր տեղը կառավարի մօտ՝ հագաւ իւր վերարկուն։ Լապտերի լոյսը զարկեց ուղղակի նորա երեսին, երևում էր որ նա կարմրել էր և ինքն էլ ժըպտալով խոստովանեց այդ։

Դռները բաց եղան և կառքը դուրս գնաց։ Անդրէսը սկսաւ դանդաղ առաջ վարել կառքը, այլ ևս շտապելու ոչինչ չկար։ Ժամանակ առ ժամանակ նա աչքի տակից նայում էր կօնդուկտօրին, որ ժպիտը շրթունքներին լուռ նստած էր։

Կառապանն էլ ծիծաղում էր ինքն իրան. նա բան էր հասկանում։

Հողմը փչելով կառքի ետևից մինչև ճանապարհի պտոյտը, նորից ուղղուեցաւ դաշտավայրի վերայ և ծառերն ու թուփերը նորից սկսեցին շնչել։ Աղուէսը տակաւին պառ-



կած էր իւր նախկին տեղը. նորա հաշիւը ճիշդ էր, նապաստակը շուտով գալու էր։ Նորից Կարան երևաց պանդոկի ընդհանուր սենեակում և ամէն բան իւր կարգին գնաց։ Գիւղացուց նա մօմը առաւ և տուաւ փողի մնացորդը. գործակատարները սկսան իրանց խորոված նապաստակը վայելել։

Տիկինը մի փոքր փնթփնթաց, բայց ըլ յանդիմանեց Կարային, նորա վերայ բարկանալու հնար չկար։

Նա սկսեց հանգիստ, առանց շտապելու և չփոթուելու շրջել և խաղաղութիւնը, որ հետևում էր նորա քայլերին, նորից թագաւորեց անշուք և աղօտ լուսաւորուած սենեկում։ Չկնավաճառները, որոնք նորից կռնեակ էին պահանջում իրանց սրճի համար, կատարելապէս զմայլուած էին Կարայի վերայ։ Նոցա մինչև այդ ժամանակ դժգոյն դէմքերը փոքր ինչ կարմրութիւն ստացան և մի աննշմարելի ժպիտ անցաւ նոցա վերայից։ Երբ Կարան պատահմամբ նայեց նոցա վերայ, նոքա խելքները թուցրին։

Տեսնելով, որ այդ երիտասարդները իրանից աչք չեն հեռացնում, Կարան մտաւ միւս սենեակը, ուր նստած էին գործակատարները և սկսեց թէյի գդալները սրբել։

—Ուշադրութիւն դարձրէք կօնդուկտօրի

վերայ, գործակատարներից մէկը հարցրեց միւսին։

— Ո՛չ, այնպէս հարևանցի տեսայ Նորան, շուտ եկաւ և իսկոյն դուրս գնաց.— ուտելով պատասխանեց միւս գործակատարը։

—Գեղեցիկ տղամարդ է, Ես եղել եմ Նորա հարսանիքում։

—Մի՞թէ նա ամուսնացած է։

— Ինչպէս չէ, Նորա կինը Լէմլիգումն է բնակվում, կարծեմ արդէն երկու որդի էլ ունի. Նա Ուլստրուպի հիւրանոցի տիրոջ աղջիկն ուզեց, և ես բաղդի բերմամբ պատահեցայ Նորա հարսանիքին։ Խօսք չունիմ, լաւ քէֆ արինք։

Գդալները վայր թափուեցան Կարայի ձեռքից, նա դուրս վազեց սենեակից։ Նա չը լսեց ամենևին, որ իրան կանչում էին ընդհանուր սենեակում. դուրս գնաց, մտաւ իւր սենեակը, փակուեցաւ նորա մէջ և սկսեց անգիտակցաբար անկողինն ուղղել։ Նորա մեծ մեծ աչքերը այժմ նայում էին անմիտ կերպով, նա շօշափեց իւր գլուխը, կուրծքը խորն հոգւոց հանեց և ոչինչ բան չկարողացաւ հասկանալ, ամենևին ոչինչ։

Լսելով տիկնոջ ձայնը, որ «Կարա, սիրելի Կարա» կոչելով կանչում էր իրան, դուրս



վազեց և ուղղակի դիմեց դէպի անտառ։ Անտառում ժապաւէնի նման գալարւում էր մի կանաչ շերտ, խոտով ծածկուած, մթան մէջ կարելի էր կարծել որ այդ շերտը մի ճանապարհ է. բայց ամենևին ճանապարհ չէր. այդ խաբուսիկ շերտը վերջանում էր ջրով լիքը մի խոր փոսի բերանի մօտ... Նապաստակը դողդողաց, նա մի ձայն լսեց ջրի մէջ և յիմարի պէս մեծ մեծ ոստիւններով՝ փախաւ գնաց։ Աղուէսը ձգեց իւր սրաքիթ դունչը և զարմանքով սկսաւ հետևել Նապաստակին. Նա ջրի ձայն չը լսեց, ապա թէ ոչ ինքն էլ կը շտապէր ջուրը ընկնել։ Նապաստակը այժմ նեղ տեղը գցեց նորան։ Երկար ժամանակ գլուխը վերքաշած և թաւոտ ագին խոտում վայր թողած կանգնած էր նա և մտածում էր թէ արդեօք Նապաստակնե՞րն են խելօքացել թէ աղուէսները յիմարացել։

Երկարատև արևմտեան հողմը փոխուեցաւ հիւսիսային ուղղութեան, յետոյ արևելեան, հարաւային և վերջապէս դարձեալ արևմտեան ուղղութիւն ստանալով դիմեց դէպի ծով, իսկ այնտեղից դէպի եզրները և նորից սկսեցին շընչել անտառի ծառերն ու թփերը։

Կրարուպեան պանդոկում այլ ևս չկային ոչ գոյգ զարմանքով լի աչքերը և ոչ էլ նեղ

կապտագոյն բրդեայ հագուստը։ Տիկինը զգացուած էր ցաւով, նա չէր կարողանում գլխի ընկնել, թէ ինչ է նշանակում այդ ամէնը. ոչ ոք այս բանը չէր հասկանում, բացի կառապան Անդրէսից, և էլի մի մարդուց, և երբ ծերերը կամենում էին զգուշացնել անփորձ երիտասարդներին, պատմում էին նոցա այս անցքը, սկիզբն անելով այսպիսի ձևով, «Մի ժամանակ Կրարուպեան պանդոկում մի աղջիկ կար, որի անունն էր Կարա։»

31 Դէպի Աթէնք, Հ. Սենկևիչի բ տպ. 1901. . — 15
32 Մի կտոր հաց, Պոտապէնկօի բ. տպ. 1901 . — 10
33 Որսորդ, Օ. Շրայնէրի . . . . . — 10
34 Մատուռի աւերակներում, Օ. Շրայնէրի . . — 10
35 Կարս Որլանդական զրոյց 1904 . . . — 5
36 Անտառապետ Ֆրեդէրիկ. Էրկման Շատրիանի. 1903 — 40
37 Տնային բժշկարան, պրակ Ա. (Թարգ. ընկ. Խս. Յար. և հրատ. բժ. Գ. Բաբեանի) . . 1 —
38 » » պրակ Բ. Թարգ. և հրատ. Նոյն 1 60

## Հրատարակութիւնները

39 Ի. Յարութիւնեան, Հայոց գիրը 1893. . . 1 50
40 Իշխ. Կ. Բեհբուդեան, Ծուխ, 1893 . . . -- 15
41 Ռանգաբէ, Եմալ, վէպ թարգմ. Յ. Լալայեանի — 25
42 Ալբէր Այնօ, Քրդի լեռան, 1894 . . . — 20
43 Ծաղարբէգեանց Յ., Հայոց լեզու ա. տ. 1894 . — 30
44 Խրիմեան Հայրիկ, Ժամանակ 1895 . . . — 15
45 Սպիրի, Այծարած Մօնի թ. Ի. Յարութին. 1885 — 15
46 Բակ. (Բարգէն վ.) Կիլիկիա 1896. . . . — 10
47 Պէստալոցցի, Լինհարդ և Գերտրուդ. 1896 . 1 50
48 Մելքիսեդեկ արքեպ. Մուրատեան, Պետրոս Շանշեան պատկերով, 1897 . . . . — 50
49 Թ. Ա. Խոհարարուհի, բ. տպ. ճոխացրած 1904. — 50
50—61 Լումայ, գրական հանդէս 1896—1901 իւրաքանչիւր գիրքը . . . . . . 2 —
62 - 64 Լումայ երկամսեայ հանդէս 1902 1904 տար. 6 —
65 Լումայ ամսագիր 1905 տար. բաժան. . 8 —
66 Յ. Պարոնեան, Ծիծաղ, պատկերով, 1899. . 1 25
67 » Արևել. ատամնաբոյժ կատակ. 1901 — 50
68 » Քաղաքավար. վնասները, 1901 — 75
69 Ի. Յարութիւնեան, Ստեփաննոս Պալասանեան. — 25
70 Ն. Տէր-Կարապետեան, Խաչատուր Աբովեան . — 60
71 Ի. Յարութիւնեան, Աշակերտի յուշատետր . — 30
72 » Զգացմունքների աշխարհ . — 30
73 Յարութիւն Թումանեան, Մելիք Ռստոմ . . — 25
74 Մ. Եօկայի, Ուրացողը, թարգմ. Խս. Յարութ. . — 20
75 1901 Ս. Էջմիածնի ԺԶ դարադարձը . . — 25
76 Եր. Շահազիզ, Մկրտիչ Էմին . . . . — 60
77 Կարալէնկօ, Կոյր երաժիշտը թարգ Մ. Մուշէ վրդ. — 60
78 Չորրորդ դարու հայ եկեղեցին. . . . — 20
79 Եր. Շահազիզ, Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը — 40
80 Ի. Յարութիւնեան, Իմ օրագիրը. . . . — 20
81 Մեծ Ներսէս . . . . . . . — 25
82 Դ. Խաչկոնց, Հայոց կրօն. բանաստեղծութիւնը — 60
83 Ի. Յարութիւնեան, Կին վիպագիր, Ե. Սպիրի — 10
84 Օր. Ն. Աղանեանց, (թարգմ.) Սև հացեր. . — 5
85 Կարալէնկօ. Դատաստանի օրը. թ. Մուշէ վարդ. — 40

ՀՀ Ազգային գրադարան
NL0168687

86 Ռ. Կոստ. Շարժի տարեգրութիւնը Հայոց մէջ. 1902 20
87 Գ. Վ. Ցովսէփեան. Մանրանկարչութեան արուեստը Հայոց մէջ 1902 . . . .
88 Ներսէս Մեծի յաջորդներ 1902 . . . — 25
89 Մ. Գօրկի. Չէլկաշ. Թարգմ. Մուշէ վարդ. . — 20
90 Փուչակ Նահապետի երգերը. Յով. Թագ. . — 15
91 Սահակ Պարթև. . . . . . . — 25
92 Ապուշը Ժօրժ Էսպարրի. Թարգմ. օր. Ն. Աղանեանց բ. տպ. . . . . . — 5
93 Վարժապետը. Թարգ Լ. Մ. Ա. . . . . 5
94 Հաղարան Բլբուլ. Յ. Թումանեանց . . . — 30
95 Պատմական պատկերներ. Եր. Շահազիզ 1903 . — 60
96 Ժ. Ժ Ռուսսօ Էմիլ. I. Թ. Խա. Յարութիւն. 1904 — 50
97 Խորէն արք. Գալֆայեան և Նայր. Աղցմիքը. Եր. Շահազիզի 1904 . . . . — 60
98 Հերոստրատ. Լ. Ֆուլդայի. Թարգ. Տ. Վ. 1904 — 50
99 Կանոնք ժողովոց Մ. Ա. . . . . — 50
100 Ուղեղի նորոգ. Ֆ. Դիկմէյի Թ. Օր. Ն. Աղան. 1904 — 20
101 Գթութիւն Թարգմ. Օր. Նուարդ Աղանեանց 1904 — 5
102 Գ. Ե. Սրուանձտեան. Երկերը I Համով—հոտով 1904 1 25
103 Ալէմգիր. վէպ Վ. Փափազեանի. 1904. . — 50
104 Սուտի հոգեբանութիւն. Գար. Ենգ. 1904 . — 10
105 Հայրեր և զաւակներ Ի. Տուրգ. Թ. Մուշէ վ. 1904 — 75
106 Կօնան Դօյլ. Բանակն ինչպէս ազատեցի. Թ. Տ. Վ. 1904 . . . . . . . — 15
107 Աղերփէզա. վէպ. Վ. Փափազեանի. 1904 . . — 50
108 Ֆր. Դըկիւրէլ. Նոր Կուռք. Թարգմ Տ. Վ. 1905 — 30
109 Կար. Եղեան. Ս. Էջմ. Մ. Աթ. և Ռուսաց կառ. յարաբերութիւնների ծագումը. 1905 . — 40
110 Զ. Ռիչարդսօն. Գրքերի ընտրութիւնը Թարգմ. Բենիկ Վարդ. 1905 . . . . — 60
111 Խալամ. տաճիկ Թարգմ. Գր. Եղ. 1905 . — 20
112 Հոգեկան վարակումն և նրա նշանակութիւնը. բժշկապետ Կար. Աղաջանեանց 1905 . — 1

## *Պատկերներ*

113 Լուսաւորչի իշխաներկ մեծադիր պատկեր . 3 —
նոյնը կտաւի վերայ . . . . 15 —
114 Պետրոս Շանշեան . . . . — 10
115 Յակոբ Պարոնեան . . . , . — 10
116 Աբգար Յովհաննիսեան . . . . . — 10
117 Աւետիք Ղուկասեան . . . . . — 10
118 Գարեգին եպս. Սրուանձտեանց . . . — 10
119 Լամայի պատկերը. . . . . . . — 5

**ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԷԿ**